

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- 1.1. Սույնով Ուղղորդողը կամավոր հիմունքներով հայտնում է կամարտահայտություն՝ ձեռնարկել միջոցներ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց ուղղորդել Բանկ՝ օգտվելու համար Բանկի՝ սույն պայմանագրում նշված ծառայություններից, իսկ Բանկը հաջողված ուղղորդումների համար պարտավորվում է վճարել Ուղղորդողին պարգևավաճար՝ սույն պայմանագրում նշված կարգով և չափով:
- 1.2. Ուղղորդման ծրագիրը գործում է նաև Բանկի գործող հաճախորդների նկատմամբ, որոնք կօգտվեն Պայմանագրի 2.1 կետում նշված նոր ծառայություններից՝ ուղղորդող անձի միջնորդությամբ կամ նախաձեռնությամբ:
- 1.3. Պայմանագրի շրջանակում Բանկ կարող են ուղղորդվել միայն հետևյալ ծառայություններից օգտվող անձինք՝
 - 1.3.1. Հաշվի բացում և գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկից օգտվող նոր հաշվետեր հաճախորդ, որը հաշիվների բացելու հետ զուգահեռ կօգտվի նաև ինտերնետ-բանկ ծառայությունից,
 - 1.3.2. Նոր պլաստիկ Քարտ,
 - 1.3.3. Նոր վարկ կամ վարկային գիծ:
- 1.4. Պարգևատրում տրամադրվում է միայն հաջողված ուղղորդումների համար: Պայմանագրի իմաստով ուղղորդումը համարվում է հաջողված, եթե միաժամանակ բավարարվում են ստորև նշված պայմանները՝
 - 1.4.1. Ծառայությունը փաստացի տրամադրվում է ուղղորդվող անձին,
 - 1.4.2. Ծառայության տրամադրման պահին ուղղորդվող անձը ներկայացնում է տվյալ ուղղորդմանը համապատասխանող չկրկնվող ուղղորդման կողմ Բանկի աշխատակցին,
 - 1.4.3. Ծառայության տրամադրման պահին չկրկնվող ուղղորդման կողմի վաղեմության ժամկետը լրացած չէ: Ուղղորդման կողմ ուժի մեջ է ուղղորդման կողմի գեներացման պահին հաջորդող երեք ամիսների ընթացքում,
 - 1.4.4. Ուղղորդող անձը չի հանդիսանում «Ամերիաբանկ» ՓԲԸ աշխատակից,
 - 1.4.5. Կնքել են սույն պայմանագիրը՝ այդ թվում՝ Բանկի կայքում «Ընդունում եմ բոլոր պայմանները» նշումը ընտրելով, որից հետո միայն ուղղորդող անձը ստանում է Ուղղորդման կողմ:

2. ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 2.1. Պարգևատրումների չափը որոշվում է՝ համաձայն ստորև աղյուսակի.

Ծառայություն	Ուղղորդման
--------------	------------

		պարգևավճար (մինչ հարկումը)
Նոր քարտ	Ստանդարտ դասի (ՍրՔա, Cirrus Maestro, Visa Electron, Visa Classic, MasterCard Standard)	1,000
	Բարձր դասի (MC/Visa Gold, MC/Visa Platinum/ Infinite, MC/Visa Business)	6,000
Նոր տրամադրվող վարկ կամ վարկային գիծ	մինչև 2 մլն. ՀՀ դրամ	Չի տրամադրվում
	2-ից մինչև 20 մլն. ՀՀ դրամ	10,000
	20-ից մինչև 50 մլն. ՀՀ դրամ	25,000
	50 մլն. ՀՀ դրամից ավելի	50,000
Գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկից օգտվող նոր հաճախորդ		2,000

- 2.2. Պարգևատրվող գումարները ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի /ֆիզիկական անձնաց դեպքում/ և/կամ ՀՀ այլ օրենսդրական դրույթներին համաձայն: Հաջողված ուղղորդումների դիմաց պարգևատրումը վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ուղղորդող անձի հարկային գործակալ և գանձում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով /ֆիզիկական անձնաց դեպքում/ և/կամ ՀՀ այլ օրենսդրական դրույթներով սահմանված չափով գումարը և փոխանցում պետական բյուջե:
- 2.3. Ուղղորդող անձանց պարգևատրումները վճարվում են Բանկի կայքում ուղղորդման հայտում ուղղորդող անձի կողմից նշված դրամային բանկային հաշվին:
- 2.4. Ուղղորդող անձանց տվյալ ամսում տրամադրված ծառայությունների դիմաց պարգևատրումները վճարվում են ամսական պարբերականությամբ՝ ելնելով հաջողված ուղղորդումների տեսակից և քանակից:
- 2.5. Ուղղորդման ծրագրին մասնակցելու և պարգևավճար ստանալու համար ուղղորդող անձը պետք է պարտադիր ստանա և ունենա չկրկնվող ուղղորդման կոդ: Այնուհետև անհրաժեշտ է չկրկնվող ուղղորդման կոդը տրամադրել յուրաքանչյուր ուղղորդվող անձին, որպեսզի վերջինս ծառայությունը ստանալիս/օգտվելիս տրամադրի ուղղորդման կոդը Բանկին:
- 2.6. Ուղղորդվող անձը Պայմանագրի 2.1 կետում նշված նոր ծառայություններից օգտվելիս պետք է պարտադիր նշի, որ ինքը օգտվում է Բանկի ծառայություններից ուղղորդման ծրագրի շրջանակում, ի հավաստում որի նա պետք է Բանկին ներկայացնի ուղղորդող անձի ուղղորդման կոդը:

- 2.7. Ուղղորդման ծրագրի շրջանակում ուղղորդվող անձը կարող է նույնպես ստանալ զեղչեր կամ այլ օգուտներ/վճարներ:
- 2.8. Ուղղորդման ծրագրի շրջանակներում առանձին գործընկեր իրավաբանական անձանց հետ կարող են կնքվել առանձին պայմանագրեր: Նման դեպքերում սույն պայմանագրի դրույթների փոխարեն գործելու են առանձին պայմանագրի դրույթները:
- 2.9. Ուղղորդման կողմի վավերականության ժամկետը լրանալիս, Պայմանագրի դրույթները դադարում են, և ուղղորդող անձը պարտավոր է նոր պայմանագիր կնքել այդ պահին գործող պայմաններով և ստանալ նոր ուղղորդման նոր կողմ:
- 2.10. Պայմանագրի գործողության ընթացքում ուղղորդող կամ ուղղորդվող անձի համար ավելի բարենպաստ դրույթներ սահմանող պայմանները (պարգևավճարի ավելացում, ուղղորդման կողմի վավերականության ժամկետի երակարացում, Պայմանագրի 2.1. կետում նշված ծառայությունների ավելացում, և այլն) կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից՝ առանց որևէիցե անձի համաձայնության:
- 2.11. Եթե ուղղորդողը հանդիսանում է իրավաբանական անձ, ապա պարգևավճարների ստացման համար անհրաժեշտ է ներկայացնել նաև հաշիվ-ապրանքագիր:

**ՍՈՒՅՆՈՎ ՈՒՂՂՈՐԴՈՂԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՆԿԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ,
ՀԱՍՏԱՏՈՒՄ Է, ՈՐ ԾԱՆՈԹԱՅԵԼ Է ԲԱՆԿԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՒՈՐ ՎԵՐՈԳՐՅԱԼ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՀԱՄԱՁԱՅՆ Է ԴՐԱՆՑ ՀԵՏ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՅՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ